ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք, Ֆրոնտիկ Թևոսյանի 64,094900906,
norgeghi.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 հոկտեմբերի 2019 թվականի N 52

## ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԱՎԱԳԱՆՈՒ N 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածների՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել 2019 թվականի հոկտեմբերի 7-ի N 10 արտահերթ նիստի օրակարգը.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամաս ու շինությունները օտարելու մասին
2. Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի ավագանու 2018 թվականի հուլիսի 23-ի N 47 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին
3. Նոր Գեղի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու եվ մեկնարկային գինը հաստատելու մասին
4. Նոր Գեղի համայնքի 2019 թվականի բյուջեից /փոխադրամիջոցներից/ գույքահարկի գերավճարի հետվերադարձի մասին
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

կողմ (7) դեմ (0) ձեռնպահ (0)

Սամվել Ալեքսանյան____________

Վանիկ Ավայան____________

Անահիտ Առաքելյան____________

Արմեն Բաբախանյան____________

Վահագ Գևորգյան____________

Գագիկ Գևորգյան____________

Վլադիկ Գրիգորյան____________

Մանյա Կիրակոսյան____________

Շիրակ Մամոյան____________

Մարիա Մկրտչյան____________

Նաթելա Շմավոնյան____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Ֆրոնտիկ Թևոսյանի 64,094900906, norgeghi.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

7 հոկտեմբերի 2019 թվականի N 53

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ գլխի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ ուղղակի վաճառքով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող, Նոր Գեղի Առողջարանային փողոց 4-րդ փակուղի 13 հասցեում գտնվող (սեփականության վկայական N 24092019-07-0103), 07-048-0451-0057 կադաստրային ծածկագրով 0,060894 հա բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը և նրա վրա գտնվող 305,05 քմ (արտաքին մակերես՝ 386,85 քմ) մակերեսով հասարակական շինությունները՝ կառուցապատողներ Միհրան Վարդազարյանին, Էլմիրա Նիկողոսյանին և Նարինե Մանուկյանին:
2. Հողամասը և շինությունները օտարել ինքնակամ կառույցն իրականացնողներին 9 101 749 (ինը միլիոն մեկ հարյուր մեկ հազար յոթ հարյուր քառասունինը) դրամ գնով, որից՝ հողամասի համար՝ 1 790 284 (մեկ միլիոն յոթ հարյուր իննսուն հազար երկու հարյուր ութսունչորս) դրամ, շինության համար՝ 7 311 465 (յոթ միլիոն երեք հարյուր տասնմեկ հազար չորս հարյուր վաթսունհինգ) դրամ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

կողմ (7) դեմ (0) ձեռնպահ (0)

Սամվել Ալեքսանյան________

Վանիկ Ավալյան________

Անահիտ Առաքելյան________

Արմեն Բաբախանյան________

Վահագ Գևորգյան________

Գագիկ Գևորգյան________

Վլադիկ Գրիգորյան________

Մանյա Կիրակոսյան________

Շիրալի Մամոյան________

Մարիա Մկրտչյան________

Նաթելա Շմավոնյան________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք, Ֆրոնտիկ Թևոսյանի 64,094900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2019 թվականի N 54

# ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի N 47 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Ուժը կորցրած ճանաչել 2018 թվականի հուլիսի 23-ի N 47 որոշումը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

կողմ (7) դեմ (0) ձեռնպահ (0)

Սամվել Ալեքսանյան________________

Վանիկ Ավայյան________________

Անահիտ Առաքելյան________________

Արմեն Բաբախանյան________________

Վահագ Գևորգյան________________

Գագիկ Գևորգյան________________

Վլադիկ Գրիգորյան________________

Մանյա Կիրակոսյան________________

Շիրալի Մամոյան________________

Մարիա Մկրտչյան________________

Նաթելա Շմավոնյան________________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Ֆրոնտիկ Ծնոսյանի 64,094900906, norgeghi.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հոկտեմբերի 2019 թվականի N 55

## ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի դրույթների, Նոր Գեղի համայնքի գլխավոր հատակագծի և գոտիավորման սխեմային համապատասխան՝ ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Համաձայնություն տալ Նոր Գեղի համայնքի ղեկավարի առաջարկությանը աճուրդային (դասական աճուրդ) կարգով հետևյալ հողատեսքերը օտարելու համար ՝

1.1 Նոր Գեղի համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի (կադաստրային ծածկագիր՝ 07-048-1400-0098) 0,024362 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասի՝ մեկնարկային գինը հաստատել 750 000 (յոթ հարյուր հիսուն հազար) դրամ, մեկ քայլի չափը՝ 37 500 (երեսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ:

1.2 Նոր Գեղի համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի (կադաստրային ծածկագիր՝ 07-048-0450-0014) 0,00589 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասի՝ մեկնարկային գինը հաստատել 1 000 000 (մեկ միլիոն) դրամ, մեկ քայլի չափը՝ 50 000 (հիսուն հազար) դրամ:

1.3 Նոր Գեղի համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի (կադաստրային ծածկագիր՝ 07-048-0054-0212) 0,00923 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասի՝ մեկնարկային գինը հաստատել 400 000 (չորս հարյուր հազար) դրամ, մեկ քայլի չափը՝ 20 000 (քսան հազար) դրամ:

1.4 Նոր Գեղի համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի (կադաստրային ծածկագիր՝ 07-048-0078-0045) 0,02592 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասի՝

չափը՝ 38 500 (երեսունութ հազար հինգ հարյուր) դրամ:

1.5 Նոր Գեղի համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի (կադաստրային ծածկագիր՝ 07-048-0087-0028) 0,026 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասի՝ մեկնարկային գինը հաստատել 780 000 (յոթ հարյուր ութսնասուն հազար) դրամ, մեկ քայլի չափը՝ 39 000 (երեսունինը հազար) դրամ:

2. Աճուրդի մասնակցության վճարի չափը 5000 (հինգ հազար) դրամ է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

կողմ (7) դեմ (0) ձեռնպահ (0)

Սամվել Ալեքսանյան__________________

Վանիկ Ավայան __________________

Անահիտ Առաքելյան

Արմեն Բաբախանյան__________________

Վահագ Գևորգյան__________________

Գագիկ Գևորգյան__________________

Վարդիկ Գրիգորյան__________________

Մանյա Կիրակոսյան__________________

Շիրալի Մամոյան__________________

Մարիա Մկրտչյան__________________

Նաթելա Ճմավոնյան__________________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԵՊՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Ֆրոնտիկ Թևոսյանի 64,094900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 հոկտեմբերի 2019 թվականի N 56

# ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻՑ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԵՐԱՎՃԱՐԻ ՀԵՏՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով մասնագիտական եզրակացությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հավանություն տալ համայնքի ղեկավարին՝ Նոր Գեղի համայնքի 2019 թվականի բյուջեից փոխադրամիջոցների գույքահարկի վճարումից առաջացած գերավճարների հետվերադարձի առաջարկին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

կողմ (7) դեմ (0) ձեռնպահ (0)

Սամվել Ալեքսանյան________________

Վանիկ Ավլյան ________________

Անահիտ Առաքելյան________________

Արմեն Բաբախանյան________________

Վահագ Գևորգյան________________

Գագիկ Գևորգյան________________

Վլադիկ Գրիգորյան________________

Մանյա Կիրակոսյան________________

Շիրալի Մամոյան________________

Մարիա Մկրտչյան________________

Նաթելա Շմավոնյան________________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

Հավելված
Նոր Գեղի համայնքի
ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 7-ի
N 56 որոշման

# ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՀԵՏՎԵՐԱԴԱՐՁ

| Հ/Հ | Համայնքի բյուջեի հաշիվը,որից կատարվում է վերադարձ | Բանկը,որին պետք է փոխանցել գումարը | Հաշվի համարը,որին պետք է փոխանցել գումարը | Գումարը (դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | 900115104045 | Կոնվերս բանկ | 1930043119761900 | 32250 |

Համայնքի ղեկավար` Վ.Պապյան